Դ.

ԹԱՆԱՏԻ ՎԱՆՔԸ

Այս վանքի ծագման և շէնքի մասին առիթ ենք ունեցել խօսելու նախընթաց գլուխների մէջ համապատասխան տեղերում. հիմնուած տեսանք Ը. դարից առաջ, բայց ժողովրդականութիւն ստացած Ստեփաննոս Սիւնեցու նշխարներն այնտեղ ամփոփելուց յետոյ։ Ներկայ շէնքը բաղկացած է երկու մասից. տաճարը շինուած ՁԻԲ–ՁԻԸ թուականներին, Պռոշ իշխանի և նորա որդիների ժամանակ, նաւակատեաց տօնը կատարուած Մխիթար Այրիվանեցու ձեռքով և այդ առթիւ էլ նոր խմբագրած Ստեփաննոս Սիւնեցու ընդարձակ վկայաբանութիւնը։ Մատուռի շէնքը, ենթադրաբար, նոյն համարեցինք ումն «պարոն» Հայրուտի ձեռքով շինուած աղօթանոցի հետ (պատկ. 46–47)։ Եղել է մի երրորդ շէնք եւս տաճարի հարաւային կողմը, որ խսպառ սրբուած է այժմ (*)։

Ներկայ շէնքերից առաջ էլ այնտեղ եղել է կեանք ու միաբանութիւն, բայց իրական մնացորդ միայն երեք գերեզմանական արձանագրութիւն ունինք. առաջինը ՈԿԷ (= 1218) թուականից, «Խաչատուր անյաղթ փիլիսոփայի» յիշատակին, որ գտնուում է վանքից հարաւ, գիւղից դուրս գտնուած հին գերեզմանատանը. «անյաղթ փիլիսոփայ» կոչումը ապացոյց է աչքի ընկնող միաբանութեան և հոգեւոր կեդրոնի ներկայացուցչի, ինչ նշանակութեամբ էլ հասկանալու լինինք «փիլիսոփայ» կոչումը, որ միջին դարերում նշանակում էր նաև երգիչ, երաժիշտ։ Երկրորդը ՈՂ. (= 1241) թուականին Գորգայ և Գրիգորի յիշատակին է և երրորդը ՁԱ. (= 1252) թուականին խաչքարը, որ կանգնել են Սարգիս և Սիմէոն (Ցաւել. Ա. 153 ա. բ. գ.)։

Ներկայ շէնքի հնագոյն արձանագրութիւնը, ինչպէս տեսանք, ամբողջութեամբ չէ հասել մեզ (Ա. 18, պատկ. 185), բայց պակաս մասերն արգելք չեն մեզ լիովին գաղափար կազմելու նորա բովանդակութեան մասին. շէնքը կառուցուած է «ի յարք(այու)թե. մեծին եւ բարէպաշտին Աղաղայ խանին», եւ «ի կաթուղիկոսութե. տն. Ցակոբայ եւ յարիական եւ քաջատոհմ յիշխանութե. Պռոշայ եւ որդոցն Պապաքին, Հասանա, մանկան Էաչոյն», «յերկար կենդանութի. պարոնացն», Աստուածածնի փոխման տօնին երեք օր պատարագ սահմանելով բոլոր եկեղեցիներում։ Շինութեան ժամանակից է ումն Ամիրշահի արձանագրութիւնը. նա հոգացել է հիւսիսային կողմի աւանդատան կամ «մատրան» ծախսը եւ երկու պատարագ ստացել Դաւթի և Ցակոբայ տօնին (Ա. 154). թուականի հարիւրաւորը պարզ չէ, բայց միայն «Ձ» կարող է լինել, քանի որ տասնաւորն ու միաւորը «Իէ» է, միանգամայն համապատասխան Օրբէլեանի յիշած ժամանակին (*), որ շինութեան վերջաւորութեան եւ նաւակատեաց թուականն էր։ Այդպէս էլ կարդացել է Բաջբերունին (**)։ Շինութեան ժամանակից պիտի լինին Դեղի արձանագրութիւնը, գրուած ձախ աւանդատան դրան գլխին, որ քառասուն դեկան է տուել (Ցաւել. Ա. 155) և Սահակինը (Ա. 155ա)՝ յետին աջ դասի աւանդատան գլխին։

Թուականով երրորդ հնագոյն արձանագրութիւնը համարել կարող ենք Խալայչահի թոռն Խութլուբէգի արձանագրութիւնը (պատկ. 186, Ցաւել. Ա. 18բ). այստեղ եւս պակասաւոր է, մանաւանդ չունինք «Ձ» հարիւրաւորին հետեւող տասնաւորն ու միաւորը, որ յամենայն դէպս ՁԼԴ–ՁԽԱ թ. թ. մէջ կարող է լինել. այսինքն Պռոշի և Ամիր-Հասանի մահուան ժամանակների մէջ, առաջինը չէ յիշուած, որ անկարելի կը լինէր, եթէ կենդանի լինէր. իսկ երկրորդը յիշուած է, ուրեմն և կենդանի. սա էլ մեռած է ՁԽԱ թուականին (***)։ Նուիրատուն Պռոշեանների աչքի ընկնող ազատներից մէկը պիտի լինի, որի երկրորդ արձանագրութիւնն ունինք արդէն 1300–1317 թուականների մէջ (Ա. 18բ, պատկ. 187). այստեղ յայտնում է. «Ես Խութլուբէկս իմ պարոնացն ողորմութեն. Էաչո Մամախաթունին» տուի Աղալտեղի հողը և միաբանները կարգեցին մի օր Նարնջին, որ իւր կինը պիտի լինի, և մէկն իրեն։ Արձանագրութեան վաղագոյն ժամանակը 1300 թիւն ենք նշանակում, երբ Էաչին Պապաքի մահուանից յետոյ իշխանութեան գլուխն անցաւ, և յետնագոյն ժամանակը 1317 թ., երբ մեռաւ Էաչին (****)։ Որոշել չենք կարող, թէ ո՞րտեղ էր Աղալտեղի հողը, հաւանօրէն ոչ հեռու վանքից։

(*) Խաղբակեանք Ա. 116. 117-118։ Մեր «Մխիթար Այրիվանեցի» ևն.։

(*) Ղուկասեան հրատ. 143։
(**) Արարատ, 1889, 103։
(***) Խաղբակեանք Ա. 135 և 153։
(****) Անդ, 188։